Յետ-Եղեռնեան երկրորդ սերնդին պատկանող Գրիգոր Ջիհանեանը Զարա էր ծնուել: Ինքը միակ հայն էր դպրոցում եւ իր հայ անուան ու իր հայ լինելու պատճառով՝ ծաղրի, ծեծի ու հալածանքի առարկայ էր ուսուցիչների եւ աշակերտների համար: Ու երբ 1934-ին Թուրքիայում հայերին արգիլուեց հայկական ազգանուն կրել, Ջիհանեանը՝ Ջէյհանի փոխուեց: Գրիգորին վիճակուել էր իր կեանքի վերջին տարիներին Գերմանիա հաստատուել: Նա հպարտ էր, որ կարող է այլեւս ազատութեամբ յայտարարել աշխարհին, թէ ինքը հայ է: Նրա ազգային ինքնութիւնը տարօրինակ խառնուրդ էր՝ մի տեսակ հայկականութիւն, թուրք միջավայրի ու մշակոյթի գերակշռող ազդեցութեան տակ: Գրիգորի այս իւրայատուկ սերունդը իր ստացած հայկականութիւնը փոխանցել էր յաջորդին՝ գիտակցելով, որ «իւրաքանչիւր Հայ մահէն ազատած մէկու մը շարունակութիւնն է: Անցեալի մեծ ցաւերու մարմնացած ձեւն է»:

Իսկ Մահմեդականութիւն ընդունած հայե՞րը: Վերջին տարիներին, հետաքրքրութեամբ է խօսւում Համշէնցիների մասին, այդ մահմեդական հայերը, որոնք այսօր ցրուած են արեւմտեան Թուրքիայից մինչեւ Կրասնոդար եւ դեռ աւելի արեւելք: Նրանցից ոմանք տեղեակ են իրենց հայ արմատների մասին եւ նոյնիսկ պատրաստ՝ այդ արմատներին վերադառնալու: Արդեօք, հայ ժողովուրդը պատրա՞ստ է նրանց իր գիրկը ընդունելու, թէ՞ հայի ազգային ինքնութեան մէջ այնքան զօրեղ է Քրիստոնէութիւնը իբրեւ ազդակ, որ նման հարցադրում անգամ անընդունելի է: Այնուամենայնիւ, համշէնցիների կրօնափոխութիւնը դարերի հարց է: Իսկ Եղեռնի սարսափի տակ կրօնափոխ հայե՞րը, որոնց դէմ չդադարեց հալածանքը: